

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018

Տևողությունը **150** րոպե

11-րդ դասարան

**Ա. Աշխատանք բնագրով:**

1512 թ. Մեղապարտ Հակոբի ձեռքով Վենետիկում լույս է տեսել հայերեն անդրանիկ մատյանը՝ «Ուրբաթագիրքը»՝ մեր տպագրության երախայրիքը: Մեղապարտ Հակոբը երևի մտածել էր, որ հայ մարդն առաջին անգամ ձեռքն է վերցնելու դժվարությամբ երկնած մի մատյան, որը պետք է լինի հայ ժողովրդի ռահվիրան՝ դյուրընթեռնելի և հոգեշահ: Դրա համար էլ կազմել է յուրատեսակ մի ժողովածու, որը պարունակում է ապաքինման համար կարդալիք աղոթքներ, մաղթանքներ, վարքագրական մի աշխատանք, Ավետարանի ընդարձակ հատվածներ, գեղեցիկ կտորներ միջնադարյան գրականությունից, օրինակ՝ մի հատված Գրիգոր Նարեկացու նշանավոր երկից: Այս ընտիր հավաքածուի անունն էլ «Ուրբաթագիրք» է, քանի որ սկսվում է «Սուրբ ուրբաթ» գրույցով, որի առաջին նախադասությունն է. «Ուրբաթ ար կամ չորեքշաբթի, տանին զհիվանդն ի դուռն եկեղեցոյն»»: Գրքի միևնույն տառը մի քանի ձևեր ունի: Նույն տառից ձուլված են եղել չափով ու ձևով իրարից տարբեր մայրեր, որոնցից ստացված տառերը իրենց տարբեր պատկերներով ստեղծում են գրչագրի պատրանք:

1. Տեքստից դո՛րս գրեք տրված բառակազմական կաղապարներով մեկական բաղադրյալ բառ՝ արմատ+հոդակապ+արմատ+ածանց, ածանց+արմատ+ածանց, արմատ+ածանց+հոդակապ+արմատ+ածանց, արմատ+ածանց+հոդակապ+արմատ:  
( 2 միավոր)
  2. Տեքստից դու՛րս գրեք գրաբարյան նախդիրներ պարունակող բառերը: (1 միավոր)
  3. **Մատյան, երախայրիք, վարքագրություն, գրչագիր** բառերի իմաստները բացատրե՛ք կամ գրե՛ք մեկական հոմանիշ: (2 միավոր)
  4. Տեքստում որոնք են **կարապետ, բանդագուշանք, առաջնեկ, ծնել** բառերի հոմանիշները:
  5. Բացատրե՛ք՝ **մայր** բառը ինչ իմաստով է կիրառվել տեքստում: (2 միավոր)
  6. Գրե՛ք Գրիգոր Նարեկացուն վերաբերող շրջասությունը: (1 միավոր)
  7. Գրաբարից աշխարհաբարով թարգմանե՛ք տրված նախադասությունը՝ «**Ուրբաթ ար կամ չորեքշաբթի, տանին զհիվանդն ի դուռն եկեղեցոյն**»:( 3 միավոր)
  8. Նշե՛ք՝ տրված բառերը խոսքիմասային ինչ արժեքներով կարող են հանդես գալ՝ **հայերեն, հայ, հատված, չափ**: (1 միավոր)
  9. Դու՛րս գրեք դերանվանական հոլովման ենթարկվող դերանունները: (1 միավոր)
  10. Դու՛րս գրեք երկու բարդ ստորադասական նախադասություն, որոնցում ստորադաս նախադասությունը գլխավորին միացած լինի հարաբերական դերանունով: Նշե՛ք երկրորդական նախադասությունների շարահյուսական արժեքը: (2 միավոր)
- Բ. Շարադրություն՝ «Իմաստուն խոսքի արժեքը» վերնագրով**  
(երկու էջի սահմաններում): (5 միավոր)